

# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

## Յիսուսի ծնունդը



Written by: Edward Hughes

Illustrated by: M. Maillot

Alastair Paterson

Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1


Canada

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.



Երկար ժամանակ  
առաջ Աստուած Գաբրիել  
հրեշտակը ղրկեց ազնիւ  
հրեայ երիտասարդ կոյս  
աղջկայ մը քով, որ կը  
կոչուէր Մարիամ:



Հրեշտակը ըսաւ անոր, "Դու  
տղայ զաւակ մը պիտի ունենաս  
եւ պիտի կոչես Յիսուս: Ան պիտի  
կոչուի որդին ամենաբարձրին:  
Ան պիտի իշխէ յաւիտեան":



"Ինչպես կրնայ ըլլալ ասիկա",  
ապշած հարցուց իրեն  
կոյս աղջիկը: "Տակաւին  
տղամարդու հետ չեմ  
եղած": Հրեշտակը  
ըսաւ Մարիամին,  
որ "մանուկը պիտի  
գայ Աստուծմէ եւ  
երկրաւոր հայր  
պիտի չունենայ":



Ետքը հրեշտակը ըսաւ Մարիամին, որ  
իր հօրեղբօր աղջիկը Էլիզապէթը որդի  
մը կ'ունենայ իր ծեր  
տարիքին: Ասիկա  
արդէն հրաշք մըն  
էր: Մարիամի  
հանդիպումէն  
ետք Էլիզապէթին  
երկուքը մէկ  
փառաբանեցին  
Աստուծոյ:



Մարիամ կը  
պատրաստուէր  
ամուսնանալու  
Յովսէփ կոչուող  
երիտասարդի  
մը հետ, Յովսէփ  
շատ տիրեցաւ,  
երբ լսեց, թէ  
զաւակ մը կը  
սպասէ: Ան  
կարծեց,  
թէ ուրիշ  
երիտասարդ  
մըն էր անոր  
հայրը:



Երագի մէջ Աստուծոյ հրեշտակը  
ըսաւ Յովսէփին, թէ այս պզտիկը  
Աստուծոյ որդին է: Յովսէփ պիտի  
օգնէր Մարիամին մեծցնելու  
համար Յիսուսը:




Յովսէփ վատահեցաւ եւ հնազանդեցաւ Աստուծոյ:  
Ան նաեւ հնազանդեցաւ իր երկրին  
օրուայ օրէնքներուն:  
Նոր օրէնքին համաձայն  
ինք եւ Մարիամ  
հեռացան



իրենց մայր  
քաղաքէն  
Բեթղեհէմէն,  
որպէսզի վճարեն իրենց տուրքը:





Մարիամ պատրաստ  
էր ծննդաբերելու իր  
մանուկը, սակայն  
Յովսէփ չէր կրնար  
պարապ սենեակ  
մը գտնել: Բոլոր  
պանդոկները

լեցուն  
էին:



Վերջապես Յովսեփ գտավ ախոռ մը: Հոն Յիսուս  
Մանուկը ծնավ: Անոր մայրը իր քովը դրավ մանուկը  
ամանին մեջ, ուր գետեղուած  
էր անասուններուն  
ուտելիքները:



Մօտերը հովիւներ իրենց հոտերը կը հսկէին:  
Աստուծոյ հրեշտակը երեւցաւ եւ  
հրաշալի լուրը տուաւ  
անոնց:



"Այսօր ձեզի ծնաւ փրկիչ Դաւիթի քաղաքին մէջ,  
որ ինքը Քրիստոսն է: Մանուկը  
պիտի գտնէք մտուրին  
մէջ":




Յանկարծ զանազան լուսաւոր հրեշտակներ  
երեւցան փառաբանելով Աստուծոյ  
եւ արտասանելով "փառք  
Աստուծոյ  
եւ




խաղաղութիւն  
աշխարհին", ...



... Ամենաբարձրին լաւութիւնը  
մարդոց հանդէպ:




Հովիւները շուտով ախոռ  
շտապեցին: Մանուկը տեսնելէ  
ետք, հրեշտակներուն տուած լուռը  
տարածեցին Յիսուսի մասին:





Ութը օր ետք Յովսեփ  
եւ Մարիամ Յիուսը  
բերին Երուսաղեմի  
տաճարը: Հոն Սիմոն  
անունով մարդ մը  
կար, որ Աստուծոյ  
կը փառաբանէր  
մանուկին համար,  
անդին ծեր Աննան  
ուրիշ ծառայ  
Աստուծոյ  
շնորհակալութիւն  
կը յայտներ:






Երկուքն ալ գիտէին, որ  
Յիսուս որդին Է Աստուծոյ,  
խոստացուած Փրկիչը:

Յովսէփ երկու  
թռչուն իբր զոս  
մատուցանեց: Այս  
Էր մատուցումը  
Աստուծոյ օրէնքին  
համաձայն, երբ  
աղքատ ընտանիք  
մը իրենց սոր  
ծնեալ զաւակը  
ներկայացուցին  
Աստուծոյ:




Ժամանակ մը ետք,  
յատուկ աստղ  
մը, Արեւելքէն  
խոհեմ մարդիկը  
առաջնորդեց  
դէպի



Երուսաղէմ. "Ո՞ր է Ան,  
հրեաներուն թագաւորը,  
որ ծնաւ", հարցուցին  
անոնք "մենք կ'ուզենք  
պաշտել զայն":



Յերովդէս թագաւոր  
լսեց այս խոհեմ մարդոց  
մասին, փորձանքի մէջ  
գտնուած, անոնցմէ  
խնդրեց, որ ցոյց տան  
Յիսուսի տեղը: "Ես ալ  
կ'ուզեմ զայն պաշտել",  
ըսաւ Յերովդէս. Բայց  
ան սուտ կը խօսէր:  
Յերովդէս կ'ուզէր  
մեռցնել  
Յիսուսը:



Աստղը խոհեմ մարդիկը (մոգերուն) առաջնորդեց  
Մարիամի եւ Յովսէփի տեղը ուր Յիսուս


Մանուկը կը գտնուէր: Անոնք  
ծնկաչոք պաշտեցին եւ  
Յիսուսի թանկագին

ոսկիէ եւ  
անուշ  
հոտերէ  
նուերներ  
տուին:




Աստուած

զգուշացուց խոհեմ  
մարդոց (մոգերուն), որ  
գաղտնի տուն դառնան:  
Յերովդէս շատ շուարած  
եւ զայրացած էր:



Ան որոշած էր մեռցնել  
Յիսուսը, ոճրագործ  
կառավարիչը Բեթղեհեմի  
ամեն մանուկ տղաները  
մեռցուց:






Սակայն Յերովդէս չկրցաւ  
վնաս հասցնել Աստուծոյ  
որդիին. երագին  
մէջ զգուշացուած  
Յովսէփ առաւ  
Մարիամը եւ Յիսուս  
ապաւեն գտնելով  
Եգիպտոս:



Հերոդայի մահից  
հետո Մարիամն  
ու Ջոզսեփը  
Եգիպտոսից  
վերադարձան:



Անոնք ապրեցան  
պզտիկ քաղաքի մը մէջ, որ կը  
կոչուէր Նազարէթ, Կալիլիէ ծովուն մօտ:



# Յիսուսի ծնունդը


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ


Մատթէոս 1-2, Ղուկաս 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130





36



60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուն համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

